



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի
ինստիտուցիոնալ կարողությունների մասին

Ըստհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը	Երևանի պետական համալսարան
Կրօնական անվանումը	ԵՊՀ
Գործունեության հասցեն	ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
Նախորդ հավատարմագրման մասին	Չփ ունեցել
որոշումը և ժամկետը	

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԸ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնելող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձեռագործության կարգով՝ ՈԱԱԿ-ի ներկայացուցիչների, փորձագիտական խմբի, գործընթացի ՈԱԱԿ համակարգորի մասնակցությամբ քննարկեց Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) կողմից ներկայացված ինքնավերլուծության, փորձագիտական զեկույցի, զեկույցում նշված թերությունների վերացման մասին ԵՊՀ-ի գործողությունների ծրագրի և այդ ծրագրի վերաբերյալ փորձագիտական խմբի կարձիքի հիման վրա կազմված ԵՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ ՈԱԱԿ-ի եզրակացության նախագիծը:

Քննարկման արդյունքում ամրագրեց հետևյալը

Հավատրմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

ղիմում-հայտի ներկայացում՝	29 փետրվարի 2012
բուհի ինքնավերլուծության ներկայացում՝	2 ապրիլ 2013
փորձագիտական այցի իրականացում՝	16-19 հունիսի 2013
փորձագիտական զեկույցի ներկայացում՝	22 հեկտեմբերի 2013
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝	17 փետրվարի 2014

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳԱՍՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձեռագործման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձեռագործ անկախ փորձագետների խումբը։ Գնահատումը կատարվել է ՀՀ

¹ Հավելված 1՝ Փորձագիտական խմբի կազմը և ՈԱԱԿ-ի աջակցող անձնակազմը

Հայուսվարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով²:

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԱԿԽԱՐԿ

Գնահատում իրականացնելիս հաշվի է առնվել, որ “համալսարանը միտված է դառնալու ուսանողակենտրոն կրթական միջավայր, որն իր շրջանավարտներին պատրաստում է ակտիվ հասարակական կյանքի և ղեկավար դերի համար, մասնագիտական կարիերային և հարատև ուսումնառությանը՝ զլորալացված հասարակության և աշխատաշուկայի ժամանակակից պահանջմունքներին համապատասխան”: ԵՊՀ-ն Հայաստանի և Հարավային Կովկասի բուհերի շարքում մշտապես զրադեցրել է առաջատար դիրքեր: Իր գործության ավելի քան 90 տարիների ընթացքում ԵՊՀ-ն տվել է 100 հազարից ավելի շրջանավարտ, ստեղծվել են բազմաթիվ ֆակուլտետներ և հետազոտական կենտրոններ:

Իր գործունեության ընթացքում համալսարանը հավատարմագրում չի անցել: Կրթության որակի ապահովումն իրականացվել է որպես վերահսկման որոշ մեխանիզմների կիրառման միջոցով: Հավատարմագրման այս գործընթացը ենթակառուցվածքային կարողությունների վերլուծության համալսարանի առաջին փորձն է՝ կրթական միջավայրի բավարարության, ծրագրերի իրականացման արդյունավետության, հասարակության առջև հաշվետվողականության և վերջերս ներդրված որակի ներքին ապահովման համակարգի աշխատանքի գնահատման նպատակով:

Համալսարանը արտոնված է իրականացնել 60 բակալավրի, 130 մագիստրոսի և 70 ասպիրանտական ծրագրեր: ԵՊՀ-ում գործում են գիտական աստիճանաշնորհման 11 մասնագիտական խորհուրդներ: ԵՊՀ բոլոր ֆակուլտետներն առաջարկում են ծրագրեր, որոնք ունեն մանրամասն ձևակերպված և լավ համակարգված ուսումնական պլաններ՝ հիմնված առարկաների վրա: Նախատեսվող ուսումնառության արդյունքները սահմանակած են բոլոր ծրագրերի համար: Կրթական ծրագրերն աշխատաշուկայի և հասարակության կարիքներին ու պահանջներին համապատասխան եցնելու նպատակով մշակվել և գործարկվում են ուսանողների և շրջանավարտների հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմներ: Ծրագրերի մեծ մասը վերջին տարիներին մի քանի անգամ վերանայվել են:

Համալսարանը որդեգրել է ուսանողակենտրոն ուսումնառության մոտեցումը, սակայն անցումը դրան դեռևս ավարտուն չէ: Պետք է նաև նշել, որ ուսումնառողների գնահատումն օբյեկտիվ է, իսկ գնահատման չափանիշերը՝ թափանցիկ, այնուամենայնիվ, գնահատման օբյեկտիվությունը կարող է բարելավվել:

ԵՊՀ-ն իր լրացուցիչ կրթության ծրագրերի և դասընթացների միջոցով հասարակության տարբեր խմբերին տրամադրում է մասնագիտական ուսուցում, շարունակական կրթության դասընթացներ և հարատև ուսումնառության այլ հնարակորություններ:

Ժամանակակից ծրագրեր ունենալու պահանջը համալսարանը ձգտում է իրականացնել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցով: Այնուամենայնիվ, այդ գործընթացներն իրականացնելու համար կառուցվածքային հենք դեռևս չկա: Շրջանավարտների և հետազոտողների (հետրուհական կրթությամբ ուսումնառողների) ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում հնարավոր է, եթե կա անձնական մոտիվացիա և գիտական հետաքրքրվածություն, սակայն համալսարանը, կարծես, չունի համապարփակ քաղաքականություն, որը կներառի հետազոտությունը և գիտական մտածողությունը

² Հավելված 2՝ Ամփոփ գնահատում

կրթական ծրագրերի շրջանակում: Ավելին, բացակայում է այդ մոտեցումների ազդեցության համակարգված գնահատումը և հստակ չէ՝ վերջիններս ինչ ազդեցություն ունեն ուսումնառության վրա:

Ներկայումս ԵՊՀ-ն համագործակցության շուրջ 200 պայմանագրեր ունի միջազգային գործընկեր համալսարանների և հետազոտական կենտրոնների հետ ամրող աշխարհում: Ի լրումն երկկողմ միջրուհական համագործակցության՝ ԵՊՀ-ում տարեկան իրականացվում են ավելի քան 50 միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրեր: Մասնակցությունը TEMPUS-ի շրջանակներում կատարվող աշխատանքներին համալսարանն օգտագործում է իր կրթական ծրագրերը բենշմարքինց անելու և արդի ծրագրեր մշակելու նպատակով:

Համալսարանը հիմնականում ապահովում է կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան ռեսուրսներ: Միջին հաշվով համալսարանի շենքը (լսարաններ, լաբորատորիաներ) բավականին լավ վիճակում է կահավորման և տեխնիկական ապահովածության տեսանկյունից: Սահմանափակ ֆինանսական ռեսուրսների առկայության պարագայում բուհը կարողացել է կառուցել համապատասխան գրադարան և SS ռեսուրսներ: Ավելին, համալսարանի բյուջեով ամեն տարի զգալի գումարներ են հատկացվում մասնաշենքերի, ուսումնաբարութական բազաների ու այլ շինությունների վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար: Սակայն, լաբորատոր սարքավորումները և էլեկտրոնային դասավանդման միջավայրը նորացման կարիք ունեն: Բնուերակույի դասավանդման համար նախատեսված լսարանները քիչ են: Առկա են ռեսուրսների գնահատման մեխանիզմներ, այնուամենայնիվ, տրամադրված տեղեկատվությունը բավարար չէ հասկանալու՝ արդյոք ռեսուրսները լրիվ բավարար են ուսումնառություն կազմակերպելու և կրթական որակավորումներ ձեռք բերելու համար:

ԵՊՀ-ում ֆինանսական հոսքերի կառավարումը և վերահսկողությունն իրականացնելու նպատակով կազմվում է բյուջեային մուտքերի և եքերի տարեկան նախահաշիվ, իսկ ֆինանսական տարվա ավարտից հետո փաստացի տվյալների վերլուծությունների հիման վրա ներկայացվում է տարեկան բյուջեի կատարողականը: Այնուամենայնիվ վերլուծությունը ցույց չի տալիս, թե առաքելության որույթներն ու ուղմակարական ծրագրի ինտիրներն ինչպես են կապակցված բյուջեի հետ: ԵՊՀ-ում կրթական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումը կատարվում է բուհի առանձին ստորաբաժանումների վարչական կազմի կողմից՝ սեփական կարիքների բացահայտման հիման վրա:

Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար բժշկական վերապատրաստման դասընթացներից զատ համալսարանը ոչ մի ծառայություն չի մատուցում, և վերջիններիս որակը վերլուծված չէ: Նոյնը վերաբերում է նաև առանձնահատուկ կարիքեր ունեցող ուսանողների ուսումնառությանն ու դասավանդմանը:

Համալսարանում ներկայում աշխատում է արհեստավարժ և դասավանդման մեծ փորձ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ, որը նպաստում է կրթական ծրագրերի հիմնական նպատակներին հասնելուն: Չնայած ըստ տարակարգերի դասախոսական կազմի ընտրության, պաշտոնների տեղակալման և առաջընթացի ապահովման հաջողված փորձի՝ ԵՊՀ-ում դեռևս չկան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջները՝ ըստ կրթական ծրագրերի: ԵՊՀ-ն ունի մոտ 3000 աշխատակից, որոնցից 1300-ը ընդգրկված է հիմնական դասախոսական կազմում (166 պրոֆեսոր, 461 դոցենտ, 639 ասիստենտ և դասախոս): Համալսարանում գիտակրթական գործունեություն են իրականացնում նաև Գիտությունների ազգային ակադեմիայի 23 ակադեմիկոս և 26 թղթակից անդամ: Ուսանող-դասախոս հարաբերակցությունը կազմում է 12,5/1:

Դասախոսական կազմի որակավորման շարունակական բարձրացումն ԵՊՀ առաջնահերթությունների ցանկում է, ինչը բարձրորակ կրթություն տրամադրելու կարևորագույն նախապայման է: Վերջերս ԵՊՀ-ն ներդրել է դասախոսական կազմի որակավորման բարձրացման նոր՝ կրթիտային հենքով կառուցված գիտակրթական ծրագիրը: Այն կազմված է հատուկ վերապատրաստման դասընթացներից, որոնք միտված են զարգացնելու դասախոսների հմտությունները դասավանդման, ուսումնառության և գնահատման նոր մեթոդների կիրառման ասպարեզում:

ԵՊՀ կառավարման համակարգը ընդունելի համակարգ է գիտակրթական միջավայրում: Գործադիր իշխանությունն, ըստ ամենայնի, համամասնաբար է բաշխված և հավասարակշռված կառավարման “վերահսկման” կողեզիալ մարմիններում: Այնուամենայնիվ, կառավարման համակարգը բավական խճճված է, և ներկայումս դրա արդյունավետության մշտադիտարկումը և բարեփոխումների իրականացումը ժամանակավոր գործընթացներ են: Ներկա անցումային փուլում կազմակերպչական կառուցվածքի արդյունավետությունը կարևոր մտահոգություններից է, որը պահանջում է քննադատական մշտադիտարկում՝ որպես որակի ապահովման համակարգի մաս: Որոշումների ընդունման գործընթացը պետք է լինի առավել թափանցիկ: առավել, քանի որ բյուջեի բաշխումը չի համապատասխանում ռազմավարական պլանին:

Համալսարանի բոլոր մակարդակներում կարևորում են կրթության որակը և որակի ապահովումը, չնայած ներկայումս դա ավելի շուտ պայմանավորված է արտաքին պահանջներով: Բարձրորակ կրթություն ապահովելու նպատակով ԵՊՀ-ն այժմ ներդնում է եվրոպական չափորոշիչների և ուղենիշերի պահանջներին համապատասխանող որակի ներքին ապահովման համակարգ, որը կայացման փուլում է: Տրամադրվել են մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ գործընթացների կազմակերպման համար: Ճիշտ է, ընթանում են որոշակի գործընթացներ, սակայն պարզ չէ՝ արդյոք որակի ներքին ապահովման այս մոտեցումները բավարար և արդյունավետ են ողջ համալսարանի համար: Ակնհայտ է, որ որակի մշակույթն ամբողջապես զարգացած չէ, և որ ՊԻՄԲ շրջափուլը դեռ փակված չէ:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

1. Ռազմավարական նպատակները լայն տարածում ունեն բուհում, դասախոսներն ու ուսանողները տեղյակ են նպատակներին և ընդհանուր առմամբ աջակցում են վերջիններիս իրականացմանը:
2. Ուսանողների ներգրավվածությունը կառավարման բոլոր մակարդակներում գովելի է: Ուսանողները տեղեկացված են և ազդեցություն ունեն որոշումների կայացման գործընթացում:
3. Առկա են տեղեկատվության հավաքագրման SS գործիքներ: Մի քանի ոլորտներում տվյալները պարբերաբար հավաքագրվում են:
4. Ուսանողների գիտելիքների գնահատումն օբյեկտիվ է, իսկ գնահատման չափանիշները՝ թափանցիկ:
5. Դասախոսները մոտիվացված և նվիրված են: Ուսանողների բավարարվածությունը դասախոսներից, ընդհանուր առմամբ, բավականին բարձր է: Անձնակազմը սերտ համագործակցում է, իսկ ինդիքները լուծվում են միասնականորեն:
6. Սահմանափակ ռեսուրսներով համալսարանը կարողացել է ապահովել համապատասխան ուսումնական միջավայր, այդ թվում՝ գրադարան և SS կենտրոն:
7. Ուսանողների բավարարվածությունն ուսումնառության ռեսուրսներից և տեխնիկական աջակցությունից բավական բարձր է:

8. Համալսարանը քայլեր է իրականացնում կոռուպցիայի դեմ պայքարի՝ օգտագործելով բոլոր հնարավորությունները բացասական ոիսկերը նվազեցնելու համար:
9. Դասախոսների հասարակական գործունեությունը հաշվի է առնվում անձնակազմի գնահատման գործընթացում, որն իր հերթին նպաստում է համալսարանական հանրության՝ ծառայությունների մատուցմանը միտված նպատակների իրականացմանը:
10. Համալսարանն ունի ակտիվ միջազգայանացման բաժին, որը տարբեր քայլեր է նախաձեռնում արտաքին կապերու ու միջազգայանացումը զարգացնելու նպատակով:
11. Գնահատելի է տեղեկատվական, լավ կառուցված և թարմացված կայրեջը, որը գործում է նաև անգլերեն լեզվով, բավարարում է արտաքին պահանջներին և ապահովում է համալսարանի տեսանելիությունը:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

1. Համալսարանի առաքելությունը բավական ընդհանրական է: ԵՊՀ պրոֆիլը պետք է լինի ավելի հստակ:
2. Արտաքին շահակիցների ներգրավվածությունը բարեկավման կարիք ունի:
3. Բուհը պետք է մշակի դասավանդման ու ուսումնառության մեթոդներն ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխանեցնելու հստակ քաղաքականություն:
4. Անհրաժեշտ միջառարկայական ծրագրերի բացակայությունը մտահոգման առիթ է տալիս: Վերջինիս առկայությունը խիստ կարևոր է, քանզի հետազոտության ոլորտում բազմաթիվ հարցեր կլուծվեն միջառարկայական համագործակցությունների շնորհիվ:
5. Համալսարանը որդեգրել է ուսումնառության ուսանողակենտրոն մուտեցումը, որը կրթությունը ժամանակակից դարձնելու ամենակարևոր գրավականներից մեկն է: Անցումը դեռևս ամբողջովին իրականացված չէ, և լուրջ ջանքեր են անհրաժեշտ՝ այս ուղղությամբ առաջխաղացման հասնելու համար:
6. Առանձնահատուկ կարքիներ ունեցող և օտարերկրյա ուսանողներին տրվող աջակցությունը պաշտոնական ձևակերպման և բարեկավման կարիք ունի: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել վերջիններիս կրթական առաջինացումն ապահովելու համար, ինչպես նաև անհրաժեշտ է խթանել և ապահովել վերջիններիս ակտիվ ներգրավվածությունը համալսարանական մարմիններում:
7. Հաշվի առնելով բուհի կրթական հավակնությունները՝ կարելի է ասել, որ գիտական կոչում ունեցող դասախոսների տոկոսը քիչ է:
8. Հետազոտական գործունեությունը սահմանափակ է՝ հաշվի առնելով և՝ արդյունքները, և՝ հետազոտության մեջ ներգրավված ուսանողների և դասախոսների թիվը:
9. Բուհը դեռևս ամբողջովին չի ընդունում, որ հետազոտությունը կրթության մեջ ուսումնառության հիմնական մեթոդն է: Այսինչ, ուսանողներին հետազոտական գործունեության նախապատրաստելը պետք է բոլոր կրթական ծրագրերի բաղկացուցիչ մասը լինի:
10. Առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար անհրաժեշտ ենթակառուցվածքային հարմարություններ չկան:
11. Համալսարանում առկա են բազմաթիվ ժամանակավոր նախաձեռնություններ, սակայն միջազգայացման միասնական ռազմավարություն դեռևս չկա:
12. Միջազգայացման զարգացման գործընթացում անգլերենի չիմացությունը լուրջ բացթողում է: Դասախոսական կազմի անգլերեն լեզվի իմացությունը բավական ցածր է:
13. Որակի մշակույթը դեռևս արողջովին չի ձևակերպվել: ՊԲՄԲ շրջափուլը դեռևս փակված չէ, և իրականացված գնահատումների արդյունքները դեռևս հստակ չեն:

ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԽՈՐՀՈԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաքելություն և նպատակներ

1. Վերածնակերպել առաքելությունը և ակնկալվող վերջնարդյունքների մակարդակում ավելի հստակ դարձնել,
2. Ռազմավարական պլանում ներառել ռազմավարական նպատակների ձեռքբերման գնահատման ցուցիչներ, որոնք ռազմավարական պլանն ավելի հստակ կդադանեն, իսկ նպատակների իրականացմանը միտված հաջորդ գործողությունները՝ հնարավոր,
3. Ուսումնառության վերջնարդյունքների մակարդակում հստակ տարանջատել մասնագիտությունների և մասնագիտացումների կրթական ծրագրերը,
4. Բարելավել շահակիցների (հատկապես արտաքին) ներգրավվածությունը,
5. Վերլուծել շահակիցների ներգրավման արդյունավետությունը՝ հատուկ շեշտադրում կատարելով շրջանավարտների և աշխատաշուկայի ներկայացուցիչների ներգրավվածությանը:

Կառավարում ու վարժարարություն.

6. Պարզեցնել համալսարանի կազմակերպական կառուցվածքը: Համալսարանը կարող է ընտրել ոչ ուղացված կազմակերպական կառուցիչ մի տարբերակ, որը կշարունակի հիմնվել կոլեգիալ ակադեմիական մշակութիւն վրա,
7. Բյուջեի բաշխումը համապատասխանեցնել ռազմավարական պլանին,
8. Կառավարման համակարգն այնպես հարմարեցնել, որպեսզի դասախոսական կազմի ներդրումը կրթական քաղաքականությունների մշակման, կիրառման և վերանայման գործընթացներում լինի ավելի մեծ:
9. Կիրառել ռիսկերի և հնարավորությունների գնահատման ցուցավորումը որպես պարբերական պլանավորման գործիք,
10. Ռազմավարական պլանը (որտեղ հնարավոր է) վերաթարգմանել քանակական թիրախների, և տվյալների հավաքման այնպիսի քաղաքականություն իրագործել, որը կնպաստի ռազմավարության կազմակերպված ձևով իրականացմանը,
11. Կառավարման բոլոր մակարդակներում փակել ՊԲՄԲ շրջափուլը՝ ռազմավարական պլանի նպատակներին արդյունավետորեն հասնելու նպատակով,
12. Որպես ապահովման համակարգում պարտադիր կերպով ներդնել արտաքին փորձագիտական գնահատում:

Մասնագիտության կրթական ծրագրեր.

13. Մշակել դասավանդման և ուսումնառության մեթոդներն ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխանեցնելու հստակ քաղաքականություն, որը հիմնված կլինի աներաժեշտ տեղեկատվության, (միջազգային) լավագույն փորձի տարածման և դասախոսների և ուսանողների լայն ներգրավման վրա,
14. Ներդնել հարցումների իրականացման համակարգ՝ նոր կրթական մոտեցումները քննադատորեն գնահատելու հնարավորություն ստեղծելու համար,
15. Խթանել բազմադիսցիպլինար կրթական ծրագրերի մշակումը:

Ուսանողներ.

16. Խրախուսել և պաշտոնականացնել առանձնահատուկ կարիքներ ունեցող և հաշմանդամ ուսանողների ներգրավվածությունը համալսարանի կառավարման մարմիններում,
17. Գնահատել ուսանողների կարիքների բացահայտման մեխանիզմների արդյունավետությունը,

18. Գնահատել՝ որքանով են լրացուցիչ դասընթացներն ու պրակտիկաները նպաստում ակնկալվող որակավորումների ձևավորմանը,
19. Մշակել հստակ պաշտոնական ընթացակարգ և ժամանակացույց, ինչը կօգնի ուսանողներին դիմել վարչական անձնակազմին իրենց ինտիմներով,
20. Փոխկապակցել ուսանողների և դասախոսների հետազոտական գործունեության արդյունավետությունը և գնահատել հետազոտական գործունեության արդյունավետությունը,
21. Ուսումնասիրել ուսանողների իրավունքների պաշտպանության մեխանիզմների արդյունավետությունը և վերլուծել վերջիններիս ազդեցությունը:

Դրոֆեսորապասսախոսական և ուսումնաօժանդակ կազմ.

22. Սահմանել կրթական ծրագրի պահանջներին համապատասխան դասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական հստակ որակներ,
23. Ներդնել երիտասարդ դասախոսների խորհրդատվության ու փոխօգնության համակարգ,
24. Կիրառել ուսանողական հարցման արդյունքները՝ դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրերն ուղղորդելու և անհատականացնելու նպատակով,
25. Բարելավել դասախոսական կազմի անգիրեն լեզվի իմացությունը,
26. Փոխկապակցել մասնագիտական զարգացման դասընթացները կրթական ծրագրերի որակավորումների հետ,
27. Մշակել մասնագիտական չափորոշիչներ և բարելավման մեխանիզմներ՝ վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի ատեսատավորման համար:

Հետազոտություն և զարգացում.

28. Վերանայել և մասնավորեցնել համալսարանի հետազոտության ուղղմավարությունը,
29. Ըսդլայնել հետազոտական գործունեությունը՝ ջանքերը կենտրոնացնելով հիմնականում գերազանցության կենտրոնների սահմանափակ քանակի վրա՝ ներառելով Հայաստանի և վերջինիս սահմաններից դուրս գտնվող այլ համալսարանների և կրթական կենտրոնների ներդրումները: Այս կենտրոնները կարող են խթանել նորարարությունը և հանդես գալ որպես հիմնաքար հետազոյում դասավանդման և ուսումնառության մեթոդների մշակման գործընթացում: Այս մուտեցումը հնարավոր է ներդնել բազմառարկայական ծրագրերի միջոցով, ինչպես նաև իրախուսվում է որդեգրել կրթական ծրագրի մշակման այս առավել ժամանակակից մոտեցումը՝ ավելի շատ հորիզոնական ինտեգրում ապահովելով:
30. Որդեգրել քաղաքականություն, որը նպատակառությամբ կլինի հետազոտական գործունեության համար արտաքին աղբյուրներից եկամուտների մեծացմանը,
31. Մեծացնել միջազգային բարձր վարկանիշը ունեցող ամսագրերում հրապարակումների քանակն ու բարելավել որակը՝ համալսարանի տեսանելիությունն ապահովելու նպատակով,
32. Մշակել հետազոտության ուղմավարության իրականացման և որակի վերահսկման գործիքներ,
33. Մշակել քաղաքականություն, որով կհավաստի, որ հետազոտությունը դարձել է ուսումնառության էական մեթոդ ակադեմիական կրթության մեջ: Համապատասխան կրթական մակարդակներում ուսանողների վերապատրաստումը հետազոտության և գիտական մտածողության ուղղությամբ պետք է դառնա բոլոր կրթական ծրագրերի բաղկացուցիչ մաս:

Ենթակառուցվածք և ուսուրսներ.

34. Ներդնել փաստաթղթաշրջանառության ամբողջական կեկտրոնային համակարգ, որը կհամապատասխանի տերեկատվության կառավարման քաղաքականությանը և ընթացակարգերին,

35. Վերլուծել,թե որքանով են առկա ռեսուրսներն ապահովում անհրաժեշտ միջավայր՝ ռազմավարական պլանի նպատակներից բխող կրթական գործունեությունն իրականացնելու համար,
36. Ստեղծել առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների և անձնակազմի համար անհրաժեշտ պայմաններ:

Հասարակական պատասխանատվություն.

- 37.Գնահատել հաշվետվության համակարգի արդյունավետությունը,
- 38.Մշակել թափանցիկության ապահովման քաղաքականություն,
- 39.Վերլուծել հասարակության լայն շերտերից հետադարձ կապի հավաքման գործող մեխանիզմների արդյունավետությունը:

Արտաքին կապեր և միջազգայնացում.

- 40.Մշակել միջազգայնացման ամբողջական ռազմավարություն,
- 41.Մշակել միջազգային կապերի վարչության գործառնական պլաններ, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ և որոեգությունի կենտրոնի առաքելությանը համապատասխան աշխատելառ,
- 42.Ուսումնասիրել ԵՊՀ առաքելության և ռազմավարական նպատակների իրականացմանը նպաստող գործողությունների արդյունավետությունը,
- 43.Վերլուծել՝ ինչ ազդեցություն ունեն միջազգային ծրագրերը համալսարանի առաքելության և նպատակների իրականացման վրա,
- 44.Բարելավել ուսանողների, դասախոսների և վարչական անձնակազմի անզինեն լեզվի իմացությունը,
- 45.Բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում մշակել մոդուլներ անզինեն լեզվով,
- 46.Մեծացնել ուսանողների և անձնակազմի շարժունությունը,
- 47.Իրականացնել միջազգային բենշմարքինք ինստիտուցիոնալ մակարդակով: Լավ օրինակ կարող է հանդիսանալ կրթական մեթոդաբանական վարչության փորձը:

Որակի ներքին ապահովման համակարգ.

- 48.Իջևանի մասնաճյուղն ավելի ուղղակիորեն ներգրավել համալսարանի ներքին որակի ապահովման համակարգում՝ ամբողջովին հաշվի առնելով մասնաճյուղի ներքին որակի ապահովման համակարգի արդյունքները,
- 49.Մշակել համընդգրկուն որակի ապահովման ձեռնարկ,
- 50.ԵՊՀ կառավարման բոլոր մակարդակներում փակել ՊԲՄ շրջափուլը,
- 51.SWOT վերլուծություններում ներառել նաև հնարավորություններ և ոխակեր բաժինները և ցույց տալ՝ ինչպես ոխակերը կարող են հնարավորություն դառնալ և հակառակը:

ՀԱՍՏԱՏԱՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐՍԵՐԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ

Իրականացվել է նաև համալսարանի գործընկերային գնահատում միջազգային չափանիշներին համապատասխան, որը միտված է բուհի միջազգային մակարդակով մրցունակության բարձրացմանը և համալսարանի ԵԲԿՏ ինտեգրմանը:

Դիտարկումներ՝ Ըստհանուր տպավորությունն այն է, որ բուհը գտնվում է անցումային շրջանում: Փորձագիտական խումբը բուհի ռազմավարության և գործող իրավիճակի միջև անհամապատասխանություն է տեսնում:

Փորձագիտական խումբը կարծում է, որ բուհի ծրագրերն ավելի շատ ավանդական են դասախոսակենտրոնության և առարկայակենտրոնության տեսանկյունից: Ավելի մեծ շեշտադրում կատարվում է տեսական գիտելիքի վրա, քան հմտությունների և մասնագիտական վարքագի ձևավորման: Եթե բուհը նպատակադրված է ծրագրերը ժամանակակից դարձնել, պետք է որդեգրի ուսանողակենտրոն և բազմադիմությանը մոտեցում:

Համալսարանի Մարտահրավերներից մեն այն է, որ հետազոտական գործունեությունը սահմանափակ է՝ հաշվի առնելով և՝ արդյունքները և՝ հետազոտության մեջ ներգրավված ուսանողների և դասախոսների թիվը:

Մեկ այլ ոչ պակաս կարևոր կետ է ակնկալվող ուսումնառության արդյունքների և գնահատման համակարգի միջև կապի հստակ չինելը, հատկապես՝ հմտությունների և մասնագիտական վարքագի գնահատումն ունի հետագա բարելավման կարիք:

Շատ քիչ ուսանողներ են մասնակցում միջազգային գործունեությանը, ինչպես նաև անձնակազմից ոչ բոլորն են ներգրավված միջազգայնացման գործընթացում:

Փորձագիտական խումբը չտեսավ միջազգային բենչմարքին մասին վկայող փաստեր: Որոշ ամբիոններում իրականացվում էր միջազգային բենչմարքին, սակայն վերջինիս չէր իրականացվում ինստիտուցիոնալ մակարդակով:

Համալսարանում առկա է տվյալների հավաքագրման մեխանիզմ, սակայն դեռևս ամբողջովին մշակված և ներդրված չէ: Կրթական ծրագրերի որակի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ներքին համակարգը խճճված է:

Փունագիտական խումբը գտնում է, որ համալսարանում առկա են բավարար հիմքեր տարրեր խորհուրդներում ներքին շահակիցների ներգրավվածության վերաբերյալ, սակայն արտաքին շահակիցների ներգրավվածությունը սահմանափակ է: Բացի այդ, արտաքին շահակիցների հետ հաղորդակցությունը հիմնականում ոչ պաշտոնական բնույթ է կրում:

Խորիրդատվությունները, հիմնականում, վերաբերում են՝ Բոլոնյան գործընթացին համապատասխան փոփոխություններ իրականացնելու համալսարանի ձգումանը: Միջազգային շափանիշներին համապատասխան գործընկերային գնահատման արդյունքում առաջարկվում է.

1. Համալսարանը պետք է փորձի իր ներքին կառուցվածքը դարձնել ավելի պարզ, հետևաբար՝ առավել արդյունավետ: Լավ սկիզբ կարող է լինել մի շարք հանձնաժողովների համախմբումը՝ դրանով իսկ նվազեցնելով վերջիններիս քանակը: Ի վերջո համալսարանը կարող է ընտրել ոչ ուռացված կազմակերպական կառույցի մի տարբերակ, որը կշարունակի հիմնվել կողեզրի կառավարման ակադեմիական մշակույթի վրա:
2. Արդեն առկա որակի մշակույթը խորացնելու նպատակով՝ անձնակազմը և ուսանողները պետք է օգուտ քաղեն որակի ապահովումից, այլ ոչ դիտարկեն այն որպես քեզ:
3. Համալսարանը պետք է համապատասխանի որակավորումների ազգային շրջանակով սահմանված մակարդակներին, իսկ կրթական ծրագրերն՝ ակադեմիական կրթության եվրոպական չափանիշերին:
4. Որպեսզի կիրառվին ժամանակակից դասավանդման և ուսումնառության մեթոդներ, խորհուրդը է տրվում ինստիտուցիոնալ մակարդակում մշակել կրթական հայեցակարգ, որը կանորդադառնա

հետագրությանը միտված կրթությանը և դասավանդողների վերապատրաստմանը: Պետք է մշակել հստակ կրթական հայեցակարգ՝ հիմնված վերջին միջազգային միտումների վրա: Ներդնելով այս հայեցկարգը՝ ֆակուլտետները կարող են վերջինս համապատասխանեցնել նպատակին: Ուսումնամեթոդական վարչությունը կարող է իր վրա սուանձնել հայեցակարգի մշակման պատասխանատվությունը՝ ներգրավելով բոլոր ներքին շահակիցներին: Համալսարանում առկա լավագույն փորձի ներկայացումը նույնպես կարող է օգտակար լինել: Նույն վարչությունը պետք է իրականացնի համապատասխան վերապատրաստումներ՝ նոր մշակված հայեցակարգը բոլոր դասավանդողներին ամբողջովին ընկալելի դարձնելու համար:

5. Ժամանակակից կրթական հայեցակարգի առանցքային քառերն են՝

- ուսումնական պլանի՝ միջազգային բենշմարքինզ անցած նախագիծ, որը կպարունակի նախօրոք սահմանված անկնկալվող ուսումնառության արդյունքները,
- ուսանողակենտրոն ուսումնառություն՝ ուսումնառողների ինտերակտիվ մասնակցությամբ և փոքր խմբերով ուսումնառությամբ,
- խնդիրների վրա հիմնված ուսումնառություն,
- բազմադիմությամբ մոտեցում՝ առավել հորիզոնական ինտեգրմամբ,
- բակալավրի հենց առաջին կուրսից հետազոտության և կրթության ամուր փոխկապակցում:

6. Կոչ է արվում համալսարանին ընդարձակել իր հետազոտական գործունեությունը, որը կարող է իրականացնել՝ ջանքերը հիմնականում կենտրոնացնելով գերազանցության կենտրոնների սահմանափակ քանակի վրա՝ ներառյալ այլ հաստատությունների ներդրումը, ինչպիսին է՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան կամ Բժշկական համալսարանը: Այս կենտրոնները կարող են խթանել նորարարությունը և հանդես գալ որպես հիմնաքար՝ հետազոյում դասավանդման և ուսումնառության մեթոդների մշակման զործընթացում: Այս նոր աշխատելառաձը կհանգեցնի առավել շատ միջառարկայական ծրագրերի, ուստի խրախուսվում է ներդնել ծրագրերի նախագծման այս՝ առավել ժամանակակից հայեցակարգը:

7. Համալսարանը մեծ ներդրումներ է անում միջազգային հարաբերություններում, հետևաբար խրախուսվում է շարունակել նույնությամբ: Առավել մեծ ուշադրություն պետք է դարձնել՝ անձնակազմի և ուսանողների շրջանում անզերեն լեզվի իմացությանը և շարժունության մեծացմանը:

8. Խորիուրդ է տրվում իրականացնել միջազգային բենշմարքինզ ինստիտուցիոնալ մակարդակով: Այսուել նորից կարող են օգտակար լինել ուսումնամեթոդական վարչությունը, ինչպես նաև համալսարանում առկա լավագույն փորձի օրինակները:

9. Վերջին խորիդատվությունը վերաբերում է արտաքին շահակիցների հետ հարաբերություններին: Խրախուսվում է մշակել ուսումնական համագործակցություն արտաքին շահակիցների և հասարակության հետ: Համալսարանը նաև պետք է բարելավի շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմները: Այդ ամենն իրականացնելու համար նպաստավոր կլինի սերտ համագործակցումը Հայաստանի այլ համալսարանների հետ՝ փորձի փոխանակման նպատակով:

ՓՈՂՉԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԲՈՒՀԻ ԾՐԱԳԻՐԸ

Երևանի պետական համալսարանն ընդունում է, որ փորձագիտական խմբի կողմից սրամադրված խորհրդատվությունները բուհի ուսումնական շրջանակներում են, և ներկայացրել է «Փորձագիտական գեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիր և ժամանակացույց» (այսուհետ՝ «Ծրագիր»)՝ հաստատված Գիտական խորհրդի կողմից 30.01.2014թ.:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրներվ Երևանի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման գեկույցում նշված թերությունների վերացման բուհի մշակած ծրագիրը, Եզրակացնում է.

- Համաձայն ծրագրի՝ բուհը հանձն է առնում իրականացնելիք գործունեության բոլոր տիրույթներին վերաբերող 10 չափանիշներում փորձագիտական խմբի տրամադրած խորհրդատվությունները: Խումբը գտնում է, որ հրատապ փոփոխություն կամ բարելավում պահանջող բոլոր խորհրդատվությունները ներառված են Ծրագրում և անհրաժեշտ ռեսուրսներ են տրամադրվելու առաջիկա երկու տարիների ընթացքում՝ մինչև 2015 թվականի վերջը, դրանց իրականացման համար:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ մի շաբթ խնդիրներ չեն կարևորվել բավարար չափով:

- Բուհը բարելավմանը միտված գործողությունները և վերջիններիս իրականացման քայլերը հիմնականում ներկայացրել է փորձագիտական խմբի կողմից ներկայացվող պահանջների համապատասխան: Այնուամենայնիվ, բուհն ավելի շատ կարևորում է գործընթացների փաստաթղթային կանոնակարգումը՝ տարբեր քաղաքականությունների, ընթացակարգերի և մեխանիզմների մշակումը, քան դրանց իրականացումը և նպատակներին համապատասխան ազդեցության ուսումնասիրումը:
- Բոլոր քայլերի համար հստակ նշված են պատասխանատու անձիք/աշխատանքային խումբը: Գործողությունների ծրագրում հստակ սահմանված է՝ ինչպես պետք է իրականացնեն և ինչ ռեսուրսներ կպահանջվեն իրականացման համար: **Խնդիրների մեծ մասի լուծման համար տրամադրված ռեսուրսները համապատասխան են:**
- 10 չափանիշների մակարդակով պլանում նախատեսված գործողությունների **տրամաբանական հաջորդականությունը հիմնականում պահպանված է, իրականացման ժամկետները հիմնականում հստակ են և իրատեսական**, սակայն որոշ հիմնախնդիրների հետ կապված գործողությունները, դրանց հաջորդականությունը և քայլերի իրականացման ժամկետների տրամաբանությունը լրացնելի հստակեցման կարիք ունեն (հիմնականում «Հետազոտություն և զարգացում» տիրույթում):
- Գործողությունների ծրագրում սահմանված **վերջնարդյունքների մեծ մասը ուղղված է գործողության նպատակի իրականացմանը**, սակայն, որոշ դեպքերում այնքան էլ չափելի չեն, և հստակ չի երևում, թե որակական ինչպիսի փոփոխություն կարելի է սպասել տվյալ գործողության ավարտին: Պլանավորված են համալսարանի գործունեության հիմնական ոլորտների կարգավորման բազմաթիվ քաղաքականությունների, ընթացակարգերի և մեխանիզմների մշակում: Չի հայտարարվում, սակայն ենթադրվում է, որ այդ փաստաթղթերը կիրառության մեջ կմտնեն մշակումից անմիջապես հետո:
- Ծրագրի առանձին քայլերի իրականացման մշտադիտարկման և արդյունքների գնահատման համար հաստատության կողմից հիմնականում մեկ չափման ցուցիչ է կիրառվում հաջող իրականացումը որոշելու համար և ոչ մի չափման ցուցիչ՝ քայլերի ազդեցությունները գնահատելու համար:

Եզրահանգում. Փորձագիտական խումբը գտնում է, որ Ծրագրի հիմնական մասի իրականացումը ոփոխեր չի պարունակում: Նրա հաջող իրականացման արդյունքում մոտակա երկու տարվա ընթացքում մշակված կլինիկ հիմնական ոլորտներում համալսարանի գործողությունները կանոնակարգող նորմատիվային փաստաթղթերը և սկսված կլինիկ հիմնական գործընթացները, որից հետո կարելի է անդրադառնալ դրանց ազդեցության և արդյունավետության գնահատմանը:

Ենթադրվ վերոգրյալից, ՈԱԱԿ-ը Հավատարմագրման հանձնաժողովին առաջարկում է իր որոշման մեջ խթանել ԵՊՀ-ին

- 1) առաջնահերթ լուծում տալ **Մասնագիտության կրթական ծրագրեր**, **Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ**, **Ենթակառուցվածքներ** և **ռեսուրսներ**, **Որակի ներքին ապահովման համակարգ** ոլորտներում առկա խնդիրներին,
- 2) «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12 կետով կամ Հավատարմագրման հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում պարբերաբար ՈԱԱԿ ներկայացնել գրավոր գեկույց իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ,
- 3) ի նկատի ունենալով համալսարանի գործունեության միջազգայնացման հավակնությունները՝ վերանայել **Ծրագիրը**, հաշվի առնելով միջազգային չափանիշներին համապատասխան գործընկերային գնահատման արդյունքները և խորհրդատվությունները,
- 4) բուհի կողմից ներկայացված փորձագիտական գեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի վերանայման ժամանակ հաշվի առնել սույն եզրակացության մեջ նշված դիսուլությունները ծրագրի վերաբերյալ:

ՈԱԱԿ-ը գունում է, որ առաջարկվող բարեփոխումները կնպաստեն ինքնավերլուծության գեկույցում ներկայացված համալսարանի հավակնությունների իրականացմանը և հիմք կհանդիսանան հաջորդող գնահատման համար:

Տաճակ Առաքելյան
Փորձագ. խմբի ղեկավար

Ռուբեն Գևորգյան
ՈԱԱԿ Համակարգող

Փորձագիտական խմբի կազմը.

- Պրոֆեսոր **Բեն Վան Ջեմփ** - Բրյուսելի Ազատ համալսարանի (Vrije Universiteit Brussel) նախկին ռեկտոր և բժշկական դպրոցի դեկան, հետառողջիայի պրոֆեսոր, համալսարանական կլինիկայի կառավարման խորհրդի նախագահ, Բրյուսել,
- Պրոֆեսոր **Յան Կայնե** - Լեյդեն համալսարանի բիոգիտությունների պաշտոնաթող պրոֆեսոր, ֆիզուէխնոլոգիաների պրոֆեսոր, բույսերի ֆիզիոլոգիայի և բիոգիտությունների պրոֆեսոր Լեյդենում, Նորվեգիայի Թրոմս համալսարանի միկրոկենսաբանության հրավիրված պրոֆեսոր,
- Պրոֆեսոր **Յուրի Սուվարյան** - ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժնի ակադեմիկոս-քարտուղար, նախագահության անդամ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի վարիչ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի նախկին ռեկտոր,
- Պրոֆեսոր **Արա Ամիրյան** - Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման, որակի վերահսկման և ինքնավերլուծության վարչության պետ, ՀՊԱՀ “Գրաֆիկայի և ՄՆՀ” ամբիոնի վարիչ,
- **Զարուհի Սարգսյան՝** Երևանի «Գլանոր» համալսարանի միջազգային հարաբերություններ ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողություն:

Միջազգային դիտորդներ

- **Միշել Վեռա-** Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալության քաղաքականության մշակման գծով խորհրդատու
- **Ֆրանկ Վամելինկ** - Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալության քաղաքականության մշակման գծով խորհրդատու

ՈԱԱԿ-ի աջակցող անձնակազմ

- **Սուսաննա Կարախանյան** - ՈԱԱԿ-ի “Քաղաքականության մշակման և իրականացման բաժնի” ռեկավար և ԵՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման ավագ համակարգող,
- **Անի Մկրտչյան** - ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման պատասխանատու, և ԵՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման կրտսեր համակարգող,
- **Մելինե Հարությունյան** - ՈԱԱԿ-ի “Քաղաքականության մշակման և իրականացման բաժնի” մասնագետ և ԵՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման քարտուղար սղագրող,
- **Լիլիթ Պիպոյան** - ՈԱԱԿ-ի “Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի” մասնագետ և ԵՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման քարգմանչությունիկ:

